

ԱՐԹՆՑԷ՛Ք ԵՒ ՏԵՐ ԿԱՆԳԼԵՑԷ՛Ք ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՒՆ

Posted on August 1, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Ոսկան Մխիթարեան, Լոս Անճելըս

"Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց"

✘ Չեմ կարծեր որ այս տողերը կարդացած եւ կամ անոնց իմաստը ըմբռնած ըլլայ Մխիթարեան Միաբանութեան նշանակեալ աբբահայրը՝ Հայր Եղիա Վրդ. Քիլաղպեան: Ինչո՞ւ. որովհետեւ իր գործունեութեամբ հակառակը փաստած է մինչեւ այսօր, եւ տակաւին կը գործէ կրկնակի ամբարտաւանութեամբ: Մեր պատուարժան ընթերցողներուն աւելի մատչելի դարձնելու համար իրողութիւնները, տանք կարգ մը օրինակներ:

Ոսկան Մխիթարեան, Լոս Անճելըս

"Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց"

✘ Չեմ կարծեր որ այս տողերը կարդացած եւ կամ անոնց իմաստը ըմբռնած ըլլայ Մխիթարեան Միաբանութեան նշանակեալ աբբահայրը՝ Հայր Եղիա Վրդ. Քիլաղպեան: Ինչո՞ւ. որովհետեւ իր գործունեութեամբ հակառակը փաստած է մինչեւ այսօր, եւ տակաւին կը գործէ կրկնակի ամբարտաւանութեամբ: Մեր պատուարժան ընթերցողներուն աւելի մատչելի դարձնելու համար իրողութիւնները, տանք կարգ մը օրինակներ:

Վերջին տաս տարիներուն, իրերայաջորդ դատավարութիւններ, գողութիւններ, անհաշիւ մսխումներ, իրարու հանդէպ կատարուած զրպարտութիւններ, անիրաւութիւններ, անհանդուրժողականութիւններ, եւ այս բոլորէն վեր՝ կրաւորական հոգեվիճակներ պատճառ դարձան որ Մխիթարեան Միաբանութեան անդամներ յուսալքուած եւ հիասթափուած "հասարակաց" կեանք մը ապրին, միշտ ակնկալելով որ ուշ կամ կանուխ կը թօթափի Դեմոկրատիայի սուրը, որ իրենց գլխուն վերեւ կը ճօճի անդադար ամբարտաւան բռնակալի մը կողմէ՝ որ, իր կռնակը տուած Վատիկանի Արեւելեան ժողովի ներկայացուցիչին, կը հարուածէ ձախ ու աջ եւ կը փորձէ իր կամքը պարտադրել ոտնակոխելով միաբանական սահմանադրական օրէնքները, նոյն ատեն խախտելով Գալիֆորնիոյ Նահանգի ոչ-շահակցական ընկերութեան օրէնքները, միշտ կարծելով որ ինք այս բոլոր օրէնքներէն վեր կը մնայ:

Ապրիլ 23, 2010-ին, Լոս Անճելըսի Վիեննական Մխիթարեան ոչ-շահակցական ընկերութեան վարչական ժողովին ընթացքին, որուն ներկայ էին բոլոր վարչութեան անդամները (ոմանք հեռաձայնային կապով), կարեւոր որոշումներ առնուեցան Թահանկայի Մխիթարեան Վարժարանը նիւթական աւելի ամուր հիմերու վրայ դնելու

համար: Այս նոյն ժողովին մէջ, որոշուած էր անմիջապէս դրամ փոխ առնել դրամատուրներէն, դպրոցական եւ անոր յարակից ընթացիկ ծախսերուն համար, որուն իր հաւանութիւնը տուած էր նաեւ դպրոցի հիմնադիրներէն՝ Հայր Օգոստինոս Սեքուլեան, 89-ամեայ ծերունի վարդապետը, Մխիթարեան Միաբանութեան երիցագոյն անդամը, որ տակաւին կը մնայ արտաքսուած իր վարժարանէն, այլ խօսքով՝ իր տունէն:

Ահաւասիկ նոյն այս ժողովին մէջ նաեւ մեծամասնութեամբ որոշուած էր, 5 ընդդէմ մէկի քուէով, դպրոցէն արտաքսել Հայր Եղիայի յատուկ կարգադրութեամբ նշանակուած Յովհաննէս Խոստեղեանը, բազում տիտղոսաւոր (*քննիչ, հսկիչ, արտաքոյ կարգի յանձնախումբի ներկայացուցիչ, վերակացու, տնօրէն*) աննկարագիր, անողնայար շարլաթան մը (Հայր Եղիայի երբեմնի դասընկերը, արտաքսուած իր երբեմնի պաշտօնէն՝ Սեթեան Գերապայծառի եւ իր յաջորդներուն կողմէ), որուն ներկայութիւնը Մխիթարեան Վարժարանէն ներս ո՛չ միայն փոթորիկ ստեղծեց, այլեւ՝ վարժարանը դէմ յանդիման դրաւ հսկայ օրինական պարտաւորութիւններու եւ դատավարութիւններու, որոնց մասին պիտի անդրադառնանք հետագային մանրամասնօրէն: Անցած են արդէն առաւել քան երկու ամիսներ այս որոշումէն եւ Հայր Եղիա, որպէս Լոս Անճելըսի Վիեննական Մխիթարեան ոչ-շահակցական ընկերութեան անդամ, չկարենալով թօթափել անբարտաւանութեան պատմուճանը իր վրայէն, տակաւին կը շարունակէ պարտադրել իր կամքը, մերժելով ժողովականներուն մեծամասնութեան որոշումը, նոյն ատեն խախտելով Գալիֆորնիոյ Նահանգի ոչ-շահակցական ընկերութեան օրէնքները:

Բայց հոս կանգ չեն առնել Հայր Եղիայի ամբարտաւանութիւնն ու բռնատիրութիւնը: Երկու շաբաթներ առաջ հեռապատճենով մը Հայր Օգոստինոսին կը դրկուի վերջին ժողովին ատենագրութիւնը, ուր մանրամասնօրէն արձանագրուած է միայն ժողովին մէջ տեղի ունեցած դրամական փոխառութեան որոշումի հարցը, ամբողջութեամբ զանց առնելով Յովհաննէս Խոստեղեանի դէմ մեծամասնութեամբ առնուած որոշումը: Ատենագրութիւնը որ գրուած է անգլերէնով, յստակօրէն կը նշէ որ \$160,000-ի պարտք մը կայ վճարելի՝ Գալիֆորնիոյ Նահանգի Աշխատանքային Գրասենեակին (EDD) եւ Պետական Հարկային Գրասենեակին (IRS) Այս պարտքերը ամբողջութեամբ վճարելու համար անհրաժեշտ է դրամ փոխ առնել դրամատուրներէն,- կը նշուի ատենագրութեան մէջ:

Ատենագրութեան յաջորդող տողերուն մէջ կը կարդանք հետեւեալները. փոխ առնուելիք գումարը \$175,000 տասնհինգ տարուան համար պիտի ըլլայ 10.5% տոկոսով, եւ 3% տոկոս ալ դրամը ապահովող հաստատութեան կամ անհատին համար: Այս դրամին դէմ գրաւ պիտի դրուին եղեր՝ դպրոցին կից գտնուող երկու տունները: Այստեղ կ'արժէ յիշեցնել որ դպրոցը ոչ մէկ պարտք ունի իր կալուածներուն վրայ: Ատենագրութիւնը կը շարունակէ նշել որ փոխ առնուելիք այս գումարը պիտի դրուի ո՛չ թէ դպրոցի դրամատան հաշուին մէջ, այլ վարչութեան անդամ՝ իրաւաբան Դերենիկ Քուճաքեանի դրամատան հաշուին մէջ. այլ խօսքով՝ գայլը պահակ պիտի դնեն ոչխարներուն: Եւ

վերջապէս, այս փոխառութեան թուղթերուն վրայ պիտի ստորագրեն միայն Հայր Եղիա Քիլաղպեանն ու իր ասպարեզին մէջ կրկնակի ծախողած՝ օճալեզու Հայր Դաւիթ Ղազարեանը, որուն ղեկավարութեան օրերուն, ինչպէս անցեալին իմ փաստացի յօդուածներովս յայտնած էի (մանրամասնութեանց համար կարդալ նախորդ յօդուածներս www.hetq.am կամ www.keghart.com կայքէջերուն վրայ), վարժարանը կորսնցուցած էր մէկ միլիոն տոլար: Ահաւասիկ՝ անգամ մը եւս աղուէսը պահակ կը դնեն հաւերուն:

Երկու շաբաթներ առաջ ստացուած այս ատենագրութեան ի պատասխան, Հայր Օգոստինոս կը մերժէ ստորագրել զայն, առարկելով որ այդ ատենագրութեան մէջ կը պակսին ժողովին ամբողջական մանրամասնութիւնները: Հետեւաբար ինք համաձայն չըլլալով, կը մնայ անդրդուելի իր որոշումին մէջ: Այս բոլորը մենք կրնանք վկայել թէ որքա՛ն խոր վիհեր բացին ալեհեր ծերունի վարդապետին հոգիին մէջ, վասնզի մի քանի օրեր ետք պարտաւորուեցանք ծերունի վարդապետը հասցնել հիւանդանոց՝ արտականոն սրտի զարկերով, ինչպէս նաեւ պրկուած մատներով: Չորս օր հիւանդանոց մնալէ եւ բազում քննութիւններէ ետք, ծերունի վարդապետը ետ բերինք իր տունը, բժիշկներուն սա՛ թելադրութեամբ, որ ան միայն պէտք է հանգստանայ եւ որքան կարելի է հեռու մնայ նեղութիւն պատճառող հանդիպումներէ եւ խօսակցութիւններէ:

Տակաւին իր ապաքինման մէջ, ծերունի վարդապետը կը ստանայ հետեւեալ սպառնական նամակը Հայր Եղիայէն. **“Վարչութեանս ու Պապական Նուիրակին անունով կու գամ կրկին անգամ հրահանգելու որ 24 ժամուան ընթացքին ստորագրէք փոխ դրամ առնելու հրամանագիրը եւ շուտափոյթ կերպով ղրկէք Դերենիկի Ֆաքսին: Հակառակ պարագային, վարժարանին հետ կապուած բոլոր օրինական ու տնտեսական հետեւանքներուն պատասխանատու կը մնաք: Ասկէ զատ Պապական Նուիրակն ու Վարչութիւնս ալ, ցաւ ի սրտի, պիտի ստիպուին կանոնական քայլերու դիմել ձեզի դէմ”**

Վերլուծելէ առաջ այս ամբարտաւան նամակը, որ ոչ մէկ կերպով վայել է “Մեծաւորի” մը՝ գրուած 89-ամեայ ծերունի վարդապետին, Մխիթարեան Միաբանութեան երիցագոյն անդամին, կը ներփակեմ Հայր Օգոստինոսի պատասխանը նոյնութեամբ՝ ղրկուած Վենետիկ, Ս. Ղազար. **“Փոխառութեան համամիտ եմ, ինչպէս մեր Corporation-ի ժողովին մէջ որոշուեցաւ: Բայց համամիտ չեմ 10.5% տոկոսով փոխ առնելու, երբ ինչպէս կը տեսնուի ներփակուած թուղթին վրայ, ահաւասիկ Bank of America-ն շատ աւելի նուազ 3.5-4% տոկոսներով փոխ պատրաստ է տալու: Տակաւին խելք ունիմ դեռ, եւ տրամադիր չեմ Ձեզի եւ Դերենիկին COMMISSION վճարելու”**

Վերադառնանք հրահանգ-նամակին: Առաջին անգամ չէ որ Հայր Եղիա Քիլաղպեան կը հալածէ Հայր Օգոստինոսը: 2000 թուականէն սկսեալ մաղծ մը ունի այս ծերունի վարդապետին դէմ, որուն յառաջացման մէջ կային նաեւ անցեալի ա՛յլ տիրահոջակ դերակատարներ, որոնք այդ խաղաբեմէն հեռացած են այսօր: 2004 թուականի

դատավարութիւնները, որոնք հսկայական ծախսերու ենթարկեցին թէ՛ դպրոցը եւ թէ՛ միաբանութիւնը, ածխամատիտով արձանագրուած են միաբանութեան պատմութեան էջերուն մէջ, ի վերջոյ արատաւորելով ամբողջ միաբանութեան վարկը: Կարծեք անցեալի այս տխուր դէպքերը երբե՛ք դաս չեղան Հայր Եղիային, որուն յանձնուած է, դժբախտաբար եւ անարժանաբար, փառաւոր անցեալ ունեցող միաբանութեան մը ղեկը:

Միւսօրեան Միաբանութիւնը ներկայիս գրկուած է իր ինքնավարութենէն եւ օրինական ու սահմանադրական կարգերէն: Հետեւաբար՝ Հայր Եղիա միշտ պարտաւոր է յիշեցնելու որ ինք ենթարկուած է Արեւելեան Ժողովի կողմէ նշանակուած, Chevetogne-ի Բենեդիկտեան վանքի միաբան Michel Van Parys Պելճիքացի օտարազգի վարդապետի կարգադրութիւններուն, որովհետեւ ինք ոչի՛նչ է առանց անոր եւ իր կամքը պարտադրելու համար ամէն հարցի պարագային բեմ կը բերէ օտարազգի վարդապետին միջամտութիւնը, փաստելու համար իր անկարողութիւնն ու անճարակութիւնը:

Այս առիթով կ’ուզեմ յիշեցնել Հայր Եղիային, որ իր “առաքելութեան” մէջ պիտի ծախողի, եւ պիտի չկարենայ ո՛րեւէ գնով, հակառակ ծերունի վարդապետի վատառողջութեան, ենթարկել զինք հոգեբանական ճնշումի, օրինական եւ ապօրինի ամէն միջոցներով: Յիշեցնեմ նաեւ, որ եթէ փոխ դրամ կ’ուզէ առնել ինչ ինչ պատճառներով, Հայր Օգոստինոսին ստորագրութեան պէտք չունի երբեք՝ երբ համաձայն են մնացեալ վարչութեան անդամները, եւ հետեւաբար անիմաստ են իր կոպիտ հրահանգները, եթէ թաքուն նպատակ մը չի հետապնդեր:

Նոյնքան ցաւալի է տեսնել Միւսօրեան Միաբանութեան միւս անդամներուն՝ երեց թէ փոքրաւոր՝ անտարբերութիւնը, անփութութիւնը եւ կրաւորական վիճակը ի տես այս բոլոր խայտառակութիւններուն, որոնք առաւել եւս կը նսեմացնեն եւ կը մրոտեն պատիւը Միւսօրեան Միաբանութեան, անոր վերջալոյսի տարիներուն:

ԱՐԹՆՅԷՔ ԵՒ ՏԵՐ ԿԱՆԳՆԵՅԷՔ ՁԵՐ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒՄ:

Հեղինակի այլ գրութիւնները՝

- [Միւսօրեան Միաբանութեան Փրկութեան Ճամբան Մայր Եկեղեցի Վերադառնալ Է Ո՞վ Է Հեղինակը Այս Խարդախութիւններուն](#)
- [Անհոգութի՞ւն Թէ Դիտաւորեալ Անտարբերութիւն](#)
- [Լռելը Ոսկի Է՞](#)
- [Կորո՞ւստ, թէ Կողոպուտ](#)

